Այբ դպրոց

www.aybschool.am

2018-2019

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԱՅԲ
դպրոց

ՏԱՐԻՆ՝ ԳՈՐԾԵՐՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ. ՄԻՋԱՎԱՅՐ և ՄԱՐԴԻԿ

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

04

05

Կրթական ծրագիր. Արարատյան բակալավրիատի սկզբունքները 05
Առարկայացանկ և նախագծային ուսումնառություն.....05

Հոգաբարձուների խորհուրդ.....10
Խորհրդատվական խորհուրդ 11
Ուսուցիչներ և անձնակազմ.....12
Աշակերտներ 14
Ծնողներ 14
Շրջանավարտներ.....17



10

Իրադարձություններ 19
Հանդիպումներ 20
Նվաճումներ 21
Կարևոր փաստեր 21
Վիճակագրություն 21

18

Կրթաթոշակային համակարգ 23
Ինչպես աջակցել դպրոցին 23
Բարերարների ցանկ 24

22

ՏԱՐԻՆ՝ ԳՈՐԾԵՐՈՎ

Եթե դպրոցին նայես արտաքին հայացքով, կթվա՝ ամեն տարի նույնն է: Նույն դասասենյակներում նստած են նույն աշակերտները և անցնում են քիչ թե շատ նույն նյութը: Ուսուցիչները մտնում են դասարան, դուրս են գալիս, շտապում հաջորդ դասին: Աշակերտներն աղմկում են, ուշանում, ուրախանում և տխրում, ինչ-որ նպատակների են հասնում և ոգևորվում:

Սակայն ամբողջովին այլ պատկեր է, երբ ներսից ես տեսնում դպրոցը: Ամեն ուսումնական տարի ունի իր ոգին, իր տրամաբանությունը, իր հուզականությունը: Երեխաները միշտ շատ տարբեր են, ամեն դասը բերում է իր հետ անակնկալ, ամեն դասամիջոց լի է նոր իրողություններով: Դպրոցը փոխվում է, ինչպես փոխվում է մարդը՝ պահպանելով իր էությունը, հասունանում է, դառնում է ավելի փորձառու, ավելի լավ է գործի դնում իր ներուժը:

Անցած տարին հասունացման կարևորագույն տարին էր դպրոցի համար: Ձևավորվեց և կայացավ դպրոցի կառավարման նոր համակարգը, ձևակերպվեց և մտավ իրականացման փուլ նոր հնգամյա ռազմավարությունը, դպրոցի աջակցությանը միացան նոր բարերարներ, կայացան նոր ծրագրեր, բացվեցին համագործակցության նոր ուղղություններ: Դպրոցը ձևավորեց խորհրդատվական խորհուրդ, որը բաղկացած է կրթության, գիտության և բիզնեսի ակնառու գործիչներից, որոնք պատրաստակամություն են հայտնել աջակցելու դպրոցի զարգացմանը:

Մտնում ես «Այբ» դպրոց և զգում դրական էներգիայի ալիքները, որոնք հոսում են շենքերի միջանցքներով և որոնցով շնչում են պատերը: Այստեղ մարդիկ երջանիկ են՝ անկախ նրանից՝ սովորում են, թե աշխատում: Մենք համախմբված ենք բոլորիս համար կարևոր նպատակների շուրջ և կարծես մեծ թիմ լինենք, որը, թեև երբեմն կարող է սխալվել և թերանալ, սակայն անկոտրում գնում է դեպի հաղթանակ:

Մենք մեծ ակնկալիքներ ունենք եկող տարվանից: Կան նոր զարգացումներ, փոփոխություններ, նոր մոտեցումներ ենք կիրառում: Մենք չենք զլանում սովորել մեր սխալներից, չենք խուսափում մեր թերությունները ճանաչելուց և չենք թաքնվում վեհ բառերի հետևում: Ամուր համայնքը դրա կարիքը չունի: Մեր նպատակը պարծենալը չէ, այլ անընդհատ զարգանալը և բոլորիս՝ և՛ աշակերտների, և՛ աշխատակիցների արդյունավետությունը բարձրացնելը: Մենք բոլորս սովորում ենք վերլուծել մեր արածը և զարգացման նպատակներ դնել մեր առջև: Մենք բոլորս սովորում ենք:

Դպրոցի ազդեցությունը տարածվում է մեր պատերից դուրս: Մենք նախաձեռնել ենք համագործակցության տարատեսակ ծրագրեր, որոնց նպատակն աջակցելն է կրթության զարգացմանը Հայաստանում: Մենք երբեք չենք մոռանում, որ «Այբ»-ը ծառայում է հասարակությանը, և նրա առաքելությունը ենթադրում է լավագույն կրթական փորձի լայն տարածում մեր երկրում:

Երբ 2011 թվականին «Այբ» դպրոցը բացվեց, մեր մասին քչերը գիտեին: Էլ ավելի քչերն էին հավատում, որ դպրոցը կկայանա և կարճ ժամկետում կճանաչվի որպես օրինակելի կրթօջախ ոչ միայն Հայաստանում, այլ նաև երկրից դուրս: Ինչո՞ւ կայացավ և զորացավ «Այբ»-ը: Երկու հիմնաքար ուներ և շարունակում է ունենալ մեր գործը՝ ամուր համայնք և մեծ հավատ: Հավատն ուժ է առնում համայնքում, համայնքն ամուր է հավատով:
Ամո՛ւր մնանք շարունակաբար և զվարթ ակնկալիքներո՛վ դիմավորենք ապագան:

Արամ Փախչանյան,
«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն

«Այբ»
կրթական ավան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը սովորելու նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ նպաստելով հայկական կրթության մրցունակության բարձրացմանը: «Այբ» դպրոցի նպատակն է դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի մոդել, առաքելությունը՝ ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ:

«Այբ» դպրոցը ծառայում է որպես յուրօրինակ լաբորատորիա՝ դասավանդման ու ուսումնառության լավագույն տեխնոլոգիաների, մեթոդաբանության ու փորձառության մշակման և կրթական համակարգերի ստեղծման համար, որոնք հավակնում են տարածվելու երկրի ամբողջ կրթական համակարգում:

«Այբ» դպրոցը բացվել է 2011 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված հարյուրավոր բարերարների ֆինանսական աջակցությամբ: «Այբ» դպրոցը կարգավիճակով հիմնադրամ է (պաշտոնական անունը՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ) և հասարակական կառույց: Դպրոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, չունի սեփականատերեր ու բաժնետերեր: «Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 70%-ն ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատյան բակալավրիատ և սկզբունքներ

«Այբ» դպրոցը 12-ամյա է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) բաղադրիչներով: «Այբ»-ում դասավանդումը կատարվում է «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայկական կրթական ծրագրով, որը մշակվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ ուսումնական ծրագիր է, որի շնորհիվ հայ երեխաները, սովորելով հայկական դպրոցներում, հայրենիով, ստանում են միջազգային բոլոր խստապահանջ չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն: ԱԲ-ի ավարտական հավաստագիրն ընդունելի ու ճանաչելի է թե՛ տեղական, թե՛ միջազգային բուհերի կողմից:

Արարատյան բակալավրիատի փիլիսոփայությունը խարսխված է ութ սկզբունքների վրա, որոնք արտահայտում են ԱԲ-ի դպրոցների ինքնությունը և ապահովում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետություն, մարդկային փոխհարաբերությունների ներդաշնակություն, սովորելու առողջ միջավայր և համայնքաշինական արժեքների սերմանում:

Ա. Ամբողջականություն: ԱԲ-ն ամբողջական կրթության ծրագիր է: ԱԲ-ի նպատակը համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ անհատների ձևավորումն է:

Բ. Խորացում: ԱԲ-ն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն՝ առանց խախտելու կրթության համակողմանիության սկզբունքը:

Գ. Ստեղծարարություն: Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայրեր, ուր սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում:

Դ. Աշխատելու արվեստ: ԱԲ-ի կրթական միջավայրն իր կրթական ռեսուրսներով, խորհրդատվական համակարգով, տեխնոլոգիական լուծումներով նպաստում և տրամադրում է աշխատանքի, ակտիվության և արդյունավետության:

Ե. Արժեքներ: ԱԲ-ն արժեքներ գնահատող և սերմանող ծրագիր է: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև բարոյապես մաքուր, սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի:

Զ. Համայնք: ԱԲ-ը համայնքաշինական առաքելություն է: ԱԲ-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա շուրջ համախմբված մարդիկ են: ԱԲ-ը միավորում է կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց, ովքեր պատրաստ են նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն տալու պատասխանատվություն ստանձնելու:

Է. Միջավայր: ԱԲ-ը ձգտում է ստեղծելու այնպիսի գաղափարական, ժամանակակից և հագեցած միջավայրեր, որոնք համակում են ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու և արարելու:

Ը. Գնահատանք: ԱԲ-ի դպրոցն արժևորման, հարգանքի և շնորհակալության միջավայր է:

Արարատյան բակալավրիատ

«Այբ» դպրոցի փիլիսոփայությունն ամփոփված է դպրոցի նշանաբանի մեջ՝ **«Իմա և արա»**, գրաբարից թարգմանաբար՝ «Հասկացի՛ր և արա՛»: Այս երկու սկզբունքները խորապես փոխկապակցված են, այսինքն՝ չկա ճանաչողություն առանց իրագործման, ոչ էլ արարում՝ առանց իմացական ձեռքբերման: Այս երկուսի համադրությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	Տարրական դպրոց	Միջին դպրոց	Ավագ դպրոց*
Հայագիտական առարկաներ	✓ Մայրենի խոսքի մշակույթ	✓ Հայոց լեզու ✓ Գրականություն ✓ Մայրենի	✓ Հայոց լեզու ✓ Գրականություն
Օտար լեզուներ	✓ Անգլերեն ✓ Ռուսերեն	✓ Անգլերեն ✓ Ռուսերեն ✓ Ֆրանսերեն ✓ Իսպաներեն ✓ Գերմաներեն	✓ Անգլերեն ✓ Ռուսերեն ✓ Ֆրանսերեն ✓ Իսպաներեն ✓ Գերմաներեն
Ճշգրիտ գիտություններ	✓ Մաթեմատիկա ✓ Համակարգչային գիտություն	✓ Հանրահաշիվ ✓ Երկրաչափություն ✓ Մաթեմատիկա (5-րդ և 6-րդ դասարաններ) ✓ ՏՀՏ ✓ Ինֆորմատիկա	✓ Հանրահաշիվ ✓ Երկրաչափություն ✓ ՏՀՏ
Բնագիտական առարկաներ	✓ Գիտություն	✓ Կենսաբանություն ✓ Քիմիա ✓ Ֆիզիկա ✓ Աշխարհագրություն ✓ Բնագիտություն	✓ Կենսաբանություն ✓ Քիմիա ✓ Ֆիզիկա ✓ Աշխարհագրություն
Հասարակագիտա-կան առարկաներ		✓ Հայոց պատմություն ✓ Համաշխարհային պատմություն	✓ Հայոց պատմություն ✓ Համաշխարհային պատմություն ✓ Գործարարություն ✓ Հասարակագիտություն ✓ Մտածելու հմտություններ
Արվեստներ	✓ Կերպարվեստ ✓ Երաժշտություն ✓ Պարարվեստ	✓ Պար ✓ Երաժշտություն ✓ Գծագրություն ✓ Կերպարվեստ ✓ Տեխնոլոգիա ✓ Բեմարվեստ ✓ Երգչախումբ	✓ Պար ✓ Ռազմապար ✓ Գծագրություն ✓ Գրաֆիկական դիզայն ✓ Նկարչություն ✓ Նվագախումբ ✓ Բեմարվեստ ✓ Տղաների երգչախումբ ✓ Աղջիկների երգչախումբ
Ֆիզիկական պատրաստություն	✓ Մարմնակրթություն	✓ Մարմնակրթություն	✓ Մարմնակրթություն ✓ Բասկետբոլ (խմբակ) ✓ Լող (խմբակ)
Խմբակներ և նախագծային ուսումնառություն	✓ Շախմատ ✓ Ռուսերենի խմբակ ✓ Անգլերենի խմբակ ✓ Ֆրանսերենի խմբակ ✓ Խոսակցական ֆրանսերենի խմբակ ✓ Զարգացնող խաղեր ✓ Պարի խմբակ ✓ Թատրոնի անգլերեն խմբակ ✓ Ռոբոտիկայի խմբակ ✓ «Հմուտ ձեռքեր» խմբակ ✓ Լող ✓ Սեղանի խաղերի խմբակ ✓ Սպորտային խաղերի խմբակ ✓ Դասապատրաստում	✓ ՆԶՊ և առաջին բուժօգնություն ✓ Շախմատ ✓ Խոսակցական ֆրանսերենի խմբակ ✓ Մեդիա ակումբ ✓ Ռոբոտիկայի խմբակ ✓ Գիտության խմբակ ✓ Մյուզիքլ / բեմի ձևավորում / թատերախումբ / պարարվեստ / երգչախումբ ✓ Սպորտային խաղերի խմբակ ✓ Լող ✓ Բասկետբոլ ✓ Դասապատրաստում	✓ «Արվեստանոց» (կերպարվեստ) ✓ «Ինժեներական ակումբ» (ռոբոտաշինություն) ✓ «Տեխնոշարժ» (ծրագրավորում) ✓ «Մոբի ստուդիո» (մեդիա արտադրություն) ✓ «Ռոքեստր» (նվագախումբ) ✓ «Կանաչ քիմիա» (քիմիա) ✓ F8 (լուսանկարչություն) ✓ Film Factory (ֆիլմարտադրություն) ✓ «Ներդրողների ակումբ» (բիզնես խորհրդատվություն)

** «Այբ» ավագ դպրոցում մի շարք առարկաներ դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով:*

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ի առարկայացանկի տարբերակիչներից է նախագծային ուսումնառությունը (project-based learning), որն «Այբ» դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված **«սովորել գործելով»** սկզբունքի վրա: Այն կառուցում է ուսումնառությունը նախագծերի շուրջ: Այս ծրագրի շրջանակում աշակերտները կազմում են թիմեր և իրականացնում մեծածավալ երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը: Նախագծերի իրականացման արդյունքում զարգանում են աշակերտների մի շարք կարևորագույն հմտություններ՝ թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների որոշումը և այլն: Նախագծային ուսումնառության շնորհիվ աշակերտները, փորձելով սեփական ուժերն այս կամ այն ոլորտում, հաճախ կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Նախագծային ուսումնառության շրջանակում «Այբ» դպրոցում գործում են 9 թեմատիկ ակումբներ՝

«Արվեստանոց» (կերպարվեստ),
«Ինժեներական ակումբ» (ռոբոտաշինություն),
«Տեխնոշարժ» (ծրագրավորում),
«Մոբի ստուդիո» (մեդիա արտադրություն),
«Ռոքեստր» (նվագախումբ),
«Կանաչ քիմիա» (քիմիա),
F8 (լուսանկարչություն),
Film Factory (ֆիլմարտադրություն),
«Ներդրողների ակումբ» (բիզնես խորհրդատվություն):

Տարին՝ նախագծային ուսումնառության ակումբներում

«Արվեստանոցի» իրականացրած նախագծի արդյունքում ստեղծվեց պատկերագիրք՝ **«Տեսողական պոեզիա»,** որը հայ ժամանակակից պոեզիայի յուրահատուկ տեսողականացում է: Գրքի շնորհանդեսի ընթացքում տեղի ունեցավ հանդիպում գրքի բանաստեղծությունների հեղինակների հետ: Իսկ ակումբի աշակերտների՝ նախորդ ուսումնական տարում ստեղծած անիմացիոն ֆիլմը՝ **«Մի կտոր երևանցին»,** ցուցադրվեց «ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի և պատկերապատման միջազգային 10-րդ կինոփառատոնի փակմանը:

«Ինժեներական ակումբի» շրջանակում իրականացվեց **«Դեպի աստղեր»** նախագիծը: Նպատակն այնպիսի թռչող սարքի ստեղծումն էր, որը, բարձրանալով երկրի մակերևույթից 35-40 կմ, կնկարահաներ ամբողջ թռիչքի ընթացքը և վայրէջքը:

«Տեխնոշարժ» ակումբի անդամները շուրջ մեկ տարի աշխատեցին **ReProgramming** նախագծի վրա: Այն ծրագրավորման և հակինգի մրցույթների կայք-հարթակ է, որտեղ տարբեր դպրոցների աշակերտները հնարավորություն կունենան մրցելու միմյանց հետ անանուն կերպով կամ ներկայացնելով իրենց դպրոցը:

Նախագծային ուսումնառության շրջանակում «Մոբի ստուդիոն» ներկայացրեց **«4+1»** նախագիծը: «Այբ»-ի աշակերտները Ավետիք Իսահակյանի, Միհեր Մկրտչյանի, Հովհաննես Շիրազի և Ասլամազյան քույրերի թանգարաններում իրականացրին նկարների տեսածրման և թվայնացման աշխատանքներ, ստեղծեցին մշակույթի մեծերի թվանշային գրադարան և նրանց անհայտ նկարներով պատրաստեցին մեծ խճանկարներ: Ակումբի անդամները ներկայացրին նաև «Երազանքի հասցե» կարճամետրաժ ֆիլմը: Այն պատմում է դեռահաս Արմենի մասին, որն առաքիչ է աշխատում և մի պարզ մարդկային երազանք ունի՝ իր վաստակած գումարով հեծանիվ գնել:

Իսկ դուք գիտե՞ք՝ որտեղ և ինչպես է ծնվել Երաժշտությունը: Այբեցիները կազմակերպել էին մեկ մեղեդու ճանապարհորդություն տարբեր դարաշրջանների երաժշտական ոճերի և սովորույթների միջով: «Այբ» դպրոցի «Ռոքեստր» ակումբը նախագծային ուսումնառության շրջանակում ներկայացրեց Battle of Evermore խմբի «Լռության հնչյունները» համերգ-նախագիծը:

«Film Factory» ակումբի սաները շարունակեցին իրականացնել նախորդ ուսումնական տարվա նախագիծը՝ **«Թաքնված գանձերի հետքերով»**: Ստեղծվեցին ֆիլմեր Սբ Կաթողիկե եկեղեցու, վիշապի նշանակության և մետաղադրամների մասին, որոնց շնորհանդեսը կայացավ Սբ Կաթողիկե եկեղեցու բակում: Գործունեության արդյունքում ակումբը նաև երկու ցուցահանդես ներկայացրեց՝ Մարաշի ասեղնագործության, պազիրիկ գորգի, չարխափան իրերի և թաքնված գանձերի քարտեզի թեմաներով:

Բացի դրանից, ակումբի աշակերտների՝ նախորդ ուսումնական տարում ստեղծած «Թաքնված գանձեր» կինոշարքից 4 ֆիլմեր ներառվեցին **«Ռոլան»** մանկապատանեկան 14-րդ փառատոնի ծրագրում: Ֆիլմերը ցուցադրվեցին մեծ էկրանին, արժանացան հանդիսատեսի ջերմ ընդունելությանն ու հատուկ մրցանակի:

«Կանաչ քիմիա» ակումբի սաները շարունակեցին կատարելագործել **«Կենսապլաստիկներն ընդդեմ աղտոտվածության»** (BAP) նախագիծը: Նպատակը շրջակա միջավայրի համար վնասակար նյութերի էկոլոգիապես մաքուր փոխարինողներ ստանալն էր՝ քիմիայի գիտելիքների կիրառմամբ: Աշակերտները հետազոտել և առաջարկել են թերմոպլաստիկ օսլայի հումքով ստացվող կենսաքայքայվող պլաստիկներ՝ նավթային հումքի վրա հիմնված առկա պլաստիկների փոխարեն:

Այս նախագծով «Կանաչ քիմիա» ակումբն արդեն հաղթել է «100 գաղափար Հայաստանի համար», Diamond Challenge Armenia մրցույթներում, ինչպես նաև պատվով ներկայացել **Diamond Challenge** մրցույթի՝ ԱՄՆ-ում կայացած եզրափակիչում՝ արժանանալով հատուկ մրցանակի: Նույն նախագիծը ներկայացվել է նաև Գյոթե-ինստիտուտի կողմից կազմակերպվող բնապահպանական ամենամյա «Դպրոցը հանուն շրջակա միջավայրի» մրցույթում՝ արժանանալով ժյուրիի ու մամուլի բարձր գնահատանքին:

F8 լուսանկարչական ակումբը տարվա ընթացքում իրականացրեց երեք նախագիծ՝

«Թատրոն ուրվական»

Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի շենքի դռները չեն բացվել 2012 թվականից: Թատրոնի տպավորիչ անցյալի, անմխիթար ներկայի և անորոշ ապագայի մասին այբեցիները պատմեցին ֆոտոպատմությունների միջոցով:

.

«Հայուհի»

Նախագծի շրջանակում F8-ի անդամներն ուսումնասիրել են Հայաստանում կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության հանդեպ երիտասարդության վերաբերմունքը: Ստեղծել են այն մարդկանց ֆոտոպատմություններ, որոնք ձգտում են կոտրել հայկական իրականության մեջ գործող կարծրատիպերը: Ցուցահանդեսին զուգահեռ անցկացվեց նաև թեմայի շուրջ բանավեճ՝ հրավիրված հյուրերի մասնակցությամբ:

«Street Art»

Ովքե՞ր են փողոցներում «խզբզող» մարդիկ: Փողոցային արվեստն արվե՞ստ է, թե վանդալիզմ: Ցուցադրվեց «Այբ»-ի աշակերտների պատրաստած վիդեոինստալացիան, որի միջոցով այցելուները տեսան հայաստանցի և արտասահմանցի ստրիտ-արտիստների աշխատանքները:

Ներդրողների ակումբն այս տարի աշխատեց հուշանվերների վաճառք կազմակերպելու վրա: Նախագծի ընթացքում ակումբի անդամները կատարեցին հետազոտություններ շուկայական այս ոլորտը վերլուծելու և դրա առաջխաղացումը հասկանալու համար: Նախագծի ընթացքում արտադրվեցին բաժակներ, որոնց իրացումն ակումբը կկազմակերպի մյուս տարվա ընթացքում:

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ. ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՄԱՐԴԻԿ
(ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ, ԱՆՁՆԱԿԱԶՄ)

ՄԻՋԱՎԱՅՐ

«Այբ» կրթական հանգույցը զբաղեցնում է 6,95 հա տարածք Երևանի Արաբկիր համայնքի Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում: Այսօր դպրոցն ունի 3 մասնաշենք՝ ընդհանուր մոտ 7000 քմ ուսումնական մակերեսով (ներառյալ ՖաբԼաբը), և զինված ու համալրված է ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաներով, ռոբոտիկայի, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներով, արվեստանոց-լաբորատորիայով, սպորտդահլիճներով և համերգային դահլիճներով: Ամբողջ «Այբ» կրթական ավանը նախատեսված է 800 աշակերտի համար:

«Այբ» կրթական հանգույցի ճարտարապետական յուրօրինակ լուծումները հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի արդյունք են:

Ճարտարապետական նախագծում հաշվի են առնվել դպրոցաշինության ժամանակակից զարգացումները և համաշխարհային փորձառությունը: «Այբ» կրթական հանգույցը դառնալու է յուրատեսակ կրթական ավան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, ֆաբլաբ, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ և այլն: Դպրոցում սովորում է 457 աշակերտ (2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ:

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ. ՄԱՐԴԻԿ

«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխվելու գաղափարը համախմբել է այնպիսի մարդկանց, որոնք կյանքում կայացել են կրթության շնորհիվ և իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են հայկական կրթության զարգացման գործում: Այն, ինչ երեկ երազանք էր թվում, այսօր իրականություն է շնորհիվ այս մարդկանց ստեղծարար հավատի ու համագործակցության: «Այբ» դպրոցը, որը երկրի կրթական նորագույն զարգացումների ուղենիշ է, կյանքի է կոչվել բազմաթիվ գաղափարակիցների, բարերարների ու աջակիցների վստահության ու պտղաբեր ջանքերի շնորհիվ:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը երկու տարի է: Հխ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ հասարակական ու մասնագիտական ոլորտների հայտնի ներկայացուցիչներ:

Իեն Քրեյգ
հոգաբարձուների խորհրդի նախագահ, Մեծ Բրիտանիա

Արթուր Ալավերդյան
Հայաստան/Ռուսաստան

Լուսինե Գալաջյան
Հայաստան



Սարգիս Բադալյան
Հայաստան

Վազգեն Յակուբյան
Հայաստան

Անահիտ Ադամյան
Հայաստան/Ռուսաստան

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցում 2018 թվականի դեկտեմբերից գործում է խորհրդատվական խորհուրդ, որի կազմում ընդգրկված են հեղինակավոր անձինք, որոնց գիտելիքը և փորձառությունն ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ՝ կրթությունից և բարձր տեխնոլոգիաներից մինչև զանգվածային լրատվություն ու մարդասիրություն:

Խորհրդատվական խորհրդի հիմնական գործառույթը դպրոցի ռազմավարական ծրագրերի վերաբերյալ խորհուրդներ և առաջարկներ տրամադրելն է: Խորհրդի ստեղծումն արտացոլում է դպրոցի կատարած ներդրումը կրթության նորարարության ոլորտում և ամրագրում համաշխարհային կրթության զարգացումներին համընթաց քայլելու և Հայաստանի երեխաներին լավագույն կրթության հնարավորություն ընձեռելու «Այբ» դպրոցի տեսլականը:

Խորհրդատվական խորհրդի կազմը

Նուբար Աֆեյան
Flagship Ventures, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ

Ռուբեն Վարդանյան
IDeA հիմնադրամ, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնություն

Դավիդ Յան
ABBYY, iiko

Թիմ Օուբս
Քեմբրիջի համալսարան

Մեսրոպ քհն. Արամյան

Փատրիկ Դերհամ
Վեստմինստերյան դպրոց

ՄԱՅՔԼ ՌԵՅՍ
Լոնդոնի համալսարանական քոլեջ

Լարա Սեդրակյան
News Deeply, Bloomberg TV, ABC News

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ

«Այբ» դպրոցն ունի ավելի քան 210 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է «Այբ»-ի նաև այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

«Այբ»-ի հաջողության գրավական են մեր ուսուցիչները: Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայրն առանց բարձրակարգ մասնագետների: Մենք ուրախ ենք, որ 21-րդ դարի հայկական կրթական միջավայր կերտելու մեր կոչին միացել են բազմաթիվ հայտնի մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից: «Այբ» դպրոցի ուսուցչական կազմը համալրելիս մենք մեր առջև խնդիր ենք դրել դպրոց բերել մարդկանց, ովքեր հասարակական կարևոր ոլորտների ու հաստատությունների լավագույն մասնագետներ են և կարող են ոչ միայն իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել աշակերտին, այլև օրինակ դառնալ նրա համար, վառել նրա մեջ ուսման հանդեպ կրակը, սովորեցնել նրան սիրել առարկաները:

Կրթական հանգույցի ստեղծագործական ծրագրերում ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, արվեստագետներ, գործարարներ՝ ապահովելով դպրոցի կապը կյանքի և տեխնոլոգիաների նորագույն զարգացումների հետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

Աշխատակիցների ընդհանուր քանակ

210

Ադմինիստրատիվ անձնակազմ

88, 42%

Մանկավարժական անձնակազմ

122, 58%

ՀՀ քաղաքացի

212

ՌԴ քաղաքացի

3

ԱՄՆ քաղաքացի

1

Կամերունի քաղաքացի

1

ՄԲ քաղաքացի

1

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Դարերի ընթացքում աշխարհի քաղաքակրթություններում և մշակույթներում ձևավորվել են մարդկային արժեքների որոշակի պատկերացումներ, և շատ հաճախ մարդը սահմանվել է որպես որոշակի առաքինությունների կամ բարոյական չափանիշների կրիչ:

Բոլոր ժամանակներում կրթության հիմնախնդիրներից մեկը եղել և մնում է սովորողի արժեքային և որակական նկարագրի կերտումն ըստ տվյալ հասարակության ինքնության, բարոյական չափանիշների և ապագայի տեսլականի:

Դպրոցը՝ որպես մարդու կերտման ու ձևավորման գլխավոր օջախ, ստեղծվում է ոչ թե տնօրենի կամ ուսուցիչների կողմից, այլ համայնքի, իսկ աշակերտն այդ համայնքի գլխավոր դերակատարն է: Աշակերտի ներդրումը դպրոցաշինության ու համայնքաշինության մեջ նույնքան կարևոր է: Դպրոցի կենտրոնում գտնվում է մարդը՝ աշակերտը՝ իր տեսակով, իր ուրույն նկարագրով, և նրա շուրջ է տարվում ամբողջ աշխատանքը: «Այբ»-ի միջավայրը, որն ապահովում է դպրոցի բոլոր հաջողությունները, ստեղծում են աշակերտները՝ ուսուցիչների, դպրոցի ղեկավարների, հոգաբարձության հետ համատեղ: Աշակերտներն այստեղ ամբողջապես հավասար և լիարժեք համահեղինակ են այն ամենի, ինչ կատարվում է դպրոցում: Մեր աշակերտի տեսակն առաջին հերթին իր մեջ պարփակում է մարդկային գլխավոր առաքինությունները: «Այբ»-ը նպատակ է դրել առաջին հերթին օգնելու աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով ու արժեքներով օժտված լիարժեք անձ՝ մարդ, որը ձգտում է ճանաչելու, համագործակցելու, արարելու, մարդ, որը մտածող է և ստեղծագործող: Եվ եթե մենք առաջնորդվում ենք մարդակերտման այս սկզբունքով, ապա ստանում ենք ներդաշնակ արդյունք՝ և՛ անձնավորություն, և՛ գիտելիքներ:

ԱԲ-ի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք: «Այբ» դպրոցի ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են հետևյալ հատկանիշները:

1. Ճանաչող և ստեղծարար: Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Ճանաչողությունն ամրապնդվում է փորձառությամբ և պտղաբերում ստեղծագործումով: Իսկ յուրաքանչյուր գործ իմաստավորվում և ամբողջանում է այդ գործից ծնված փորձառական գիտելիքով: ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

2. Նախաձեռնող և հավասարակշռված:
Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողն անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի առնում ծրագրի բոլոր գործոնները և կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, մարդկանց ծառայում և առաջնորդում:

3. Ձգոն և բաց: Ձգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է՝ սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Բաց մարդը զերծ է ներքին կապանքներից և սևեռումներից, հաղորդակից է մարդկանց և ունի իրականության զգացողություն: ԱԲ-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է՝ ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:

4. Բարեխոհ և հոգատար: ԱԲ-ի աշակերտը ոչ թե պետք է ձգտի պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերի մեջ՝ ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար: Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է և անտարբեր չի անցնում իրողությունների կողքով: Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և ստեղծարար» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

Ընդհանուր քանակ՝ 457

457

Տարրական դպրոց
141 31%
աշակերտ

Միջին դպրոց
122 27%
աշակերտ

Ավագ դպրոց
194 42%
աշակերտ

Աշակերտների բաշխվածությունն ըստ սեռի

Տղա
229 50,1%

Աղջիկ
228 49,9%

Աշակերտների բաշխվածությունն ըստ երկրների

ՀՀ քաղաքացի
431 94%

ՌԴ քաղաքացի
9 1,9%

ԱՄՆ
10 2%

Ավստրիա
1 0,2%

Իռլանդիա
2 0,4%

Իսպանիա
1 0,2%

Կանադա
1 0,2%

Լիբանան
1 0,2%

Իրան
1 0,2%

ԾՆՈՂՆԵՐ

Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Մենք դիտում ենք ծնողին որպես երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակցի: «Այբ» դպրոցն ակտիվորեն ներգրավում է ծնողներին երեխաների հետ աշխատանքում, մշակվել ու հաջողությամբ գործարկվում են հետաքրքիր ձևաչափեր, որոնց շնորհիվ դպրոց-ծնող համագործակ-ցությունը տալիս է բարձր արդյունքներ: Օրինակ՝ սովորական «ծնողական ժողով» ասվածը «Այբ» դպրոցում անցկացվում է ծնող-երեխա-ուսուցիչ անհատական հանդիպման ձևաչափով. ոչ միայն քննարկվում են երեխայի հետ կապված հարցեր, այլև նախանշվում ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ամսական թեյախմությունների ձևաչափով քննարկումներն ընթացիկ և կարևոր հարցերի շուրջ պաշտոնական խորհրդակցություն են, որում բարձրացված հարցերն ու դրանց հետքերով կայացված որոշումներն ու դրանց արդյունքները արձանագրվում ու տեղեկացվում են ծնողներին: Այս հարթակների ու ծնողի հետ անհատական շփումների շնորհիվ ձևավորվել է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետ մշակույթ:

Գնահատելի է նաև, որ ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:

Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից են. նրանք նույնպես երբեմն հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով: Դպրոցում խթանվում ու քարոզվում են բարեգործությունն ու փոխօգնության մշակույթը, և ծնողներն իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակն են երեխաների համար:

Եվ, վերջապես, մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունեցել ու շարունակում ունենալ «Այբ» դպրոցի ընդլայնման ու համալրման գործում՝ այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո դպրոց եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Դպրոցի 7-ամյա պատմության ընթացքում «Այբ»-ը տվել է 300 շրջանավարտ (2019 թ. հուլիսի դրությամբ): Այսօր նրանք սովորում են Հայաստանի և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ բարձր պահելով դպրոցի անունը և «Այբ»-ի շրջանավարտի պատվավոր կոչումը: «Այբ»-ի շրջանավարտները դպրոցն ավարտելուց հետո շարունակում են ակտիվ մասնակցել «Այբ» համայնքի կյանքին՝ ընդգրկվելով «Այբ»-ի շրջանավարտների ակումբում, մասնակցելով դպրոցի և հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև համալրելով «Այբ»-ի կառույցների անձնակազմի շարքերը:

«Այբ»-ի շրջանավարտների ակումբի հիմնական նպատակը շրջանավարտների համայնքի կայացմանն ու «Այբ»-ի հետ նրանց կապի պահպանմանը նպաստելն է և նրանց ներուժի դրսևորման ու զարգացման համար պարարտ հող ստեղծելը: Շրջանավարտների ակումբի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են ընկերական մենտորության համակարգի զարգացմանը, ուսումնական գործընթացում ուսուցիչների և աշակերտների աջակցությանը, ինչպես նաև այլ հետաքրքիր միջոցառումների անցկացմանը:

Ակումբի գործունեության շրջանակում մեր շրջանավարտները հանդես են գալիս տարբեր նախաձեռնություններով: Այսպես՝ 2013-ին շրջանավարտներն իրականացրել են «Հավես ամառ» և «Հավես աշուն» ուսումնական նախագծերը, իսկ 2016-ին, 2017-ին և 2018-ին շրջանավարտների ակումբը կազմակերպել էր «Այբ»-ի ամանորյա ավանդական տոնավաճառը: «Այբ»-ի շրջանավարտները հաճախ նաև փորձի և գիտելիքի փոխանակման հանդիպումներ են ունենում դպրոցի աշակերտների հետ:

Մեր շրջանավարտները դպրոցի կենսունակության անբաժան և ամենակարևոր մասնիկներից մեկն են: Շրջանավարտների զգալի մասը դեռևս ներգրավված է դպրոցի ակտիվ կյանքում: Նրանք պարբերաբար հանդիպում են ավագ դպրոցի աշակերտների հետ, հաղորդակից դարձնում իրենց փորձին և օգտակար խորհուրդներ տալիս:

Շրջանավարտներից ոմանք դարձել են «Այբ»-ի աշխատակիցներ՝ համալրելով ադմինիստրացիայի, Ազգային երգ ու պարի ակադեմիայի, դպրոցական մրցույթների և SS թիմի շարքերը: Նրանք կամավորական սկզբունքով պարբերաբար ընդգրկվում են «Այբ»-ի տարբեր կառույցներում իրականացվող նախագծերում, ինչպես նաև մասնակցում պրակտիկայի առաջարկվող ծրագրերին: «Այբ»-ի ապագայի տեսլականի վառ ապացույցը շրջանավարտներն են, որոնք դեռ նոր են ծիլեր նետել մեր հասարակությունում և նոր են սկսում ծաղկել՝ վարակելով շրջապատին իրենց արժեհամակարգով և ապագայի նկատմամբ հստակ պատկերացումներով ու ձգտումներով:

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

50-ից ավելի պատվիրակություններ, հատուկ հյուրեր, մասնավոր այցեր, ներդպրոցական և հանրային միջոցառումներ, «Այբ»-ում կյանքը բազմերանգ է ու բազմաբնույթ, հետաքրքիր և ուսուցողական:

Դասապրոցեսներն ու այբական առօրյան՝ մեկ շնչով

«Այբ» դպրոցը հիմնեց **խորհրդատվական խորհուրդ,** որի կազմում ընդգրկվեցին հեղինակավոր անձինք, որոնց գիտելիքն ու փորձառությունը վերաբերում են ամենատարբեր ոլորտների՝ կրթությունից և բարձր տեխնոլոգիաներից մինչև զանգվածային լրատվություն ու մարդասիրություն:

«Այբ»-ի բարերար Կարո Սարգսյանի նախաձեռնությամբ **Շուշիի արվեստի կենտրոնում** կայացան «21-20 = 1 դարի արվեստ» խորագրով ցուցահանդեսը և «Մի կտոր երևանցին» նախագծի ներկայացումը: Շուշիի արվեստի դպրոցի սաների հետ համատեղ դաս անցկացվեց, ինչպես նաև նախանշվեցին հետագա համագործակցության ուղիները:

6-րդ անգամ տոնեցինք «Այբ» համայնքի ամենասիրելի տոնը՝ **Այբական խաղերը:** Այս տարվա հասույթն ուղղվեց «Այբ» դպրոցի պահարանների ձեռքբերմանը և Դիլիջանի կենտրոնական դպրոցի բակում տաղավարի կառուցմանը:

«Այբ» դպրոցի պատվիրակությունը՝ տնօրեն Արամ Փախչանյանի գլխավորությամբ, Ղազախստանում մասնակցեց **«Նազարբաև» ինտելեկտուալ դպրոցների** կոնֆերանսին: «Նազարբաև» ինտելեկտուալ դպրոցների հետ «Այբ»-ը համագործակցում է 2016 թվականից: Այս ընթացքում դպրոցը հյուրընկալել է «Նազարբաև» ինտելեկտուալ դպրոցների աշակերտների, առցանց հանդիպումներ են անցկացվել դպրոցների աշակերտների միջև, իսկ արդեն ապրիլին կայացավ «Այբ»-ի աշակերտների այցը Ղազախստան:

«Այբ» կրթական հիմնադրամի երկու նախաձեռնությունները՝ «Այբ» դպրոցը և Արարատյան բակալավրիատը, ներկայացվեցին Ավստրիայում անցկացված Միջազգային դպրոցների խորհրդի (**Council of International Schools,** CIS) ամենամյա համաժողովին: Այս տարի համաժողովը ներառեց աշխարհի 80 երկրից 800-ից ավելի դպրոց ու համալսարան՝ դառնալով ամենամեծն իր պատմության մեջ:

Ռուսական արվեստի թանգարանում բացվեց «Այբ» ավագ դպրոցի սաների աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացված աշխատանքները ներառում էին 20-րդ դարի կերպարվեստի 5 հիմնական ուղղությունները՝ սուպրեմատիզմ, կուբիզմ, սիմվոլիզմ, սյուրռեալիզմ, պոպ-արտ: Ցուցադրությունն իրականացվեց Ռուսական արվեստի թանգարանի հետ համատեղ՝ «21-20=1 դարի արվեստ» նախագծի շրջանակում:

«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի» և «Այբ» դպրոցի նախաձեռնությամբ տեղի ունեցավ **«Ծրագրավորման ժամ»** (Hour of Code) միջոցառումը, որը Երևանում կազմակերպվում էր արդեն 5-րդ անգամ:

«Այբ» դպրոցը մասնակցեց «Լույսի մոլորակ» էքսպոկոնֆերանսին: Տիեզերագնաց-այբեցիները տեղափոխվեցին **«Լույսի մոլորակ»՝** իրենց հետ տանելով հարուստ գիտելիք ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից ու ռոբոտաշինությունից: Ցուցահանդեսի հյուրերին ներկայացանք հետաքրքիր փորձերով, ինչպես նաև ներկայացրինք նախագծային ուսումնառության **«Կանաչ քիմիա»** ակումբի աշակերտների հայտնագործած կենսապլաստիկը, որն անտարբեր չթողեց ոչ մի այցելուի:

«Այբապատում» նախագիծն իրականացվեց միանգամից 4 ուղղությամբ, որոնցից 3-ը՝ գիշերակացով: Մեր աշակերտներն ու ուսուցիչներն այցելեցին Գետաշենի, Աքորու, Ծաղկավանի ու Բերքաբերի դպրոցներ:

«Այբ» դպրոցի պատվիրակությունը՝ տնօրեն Արամ Փախչանյանի գլխավորությամբ, հյուրընկալվեց Ղազախստանի Ուստ-Կամենոգորսկ քաղաքի Նազարբաևի ինտելեկտուալ՝ քիմիակենսաբանական թեքումով դպրոցում: Այբեցիները մեկնել էին Ղազախստան՝ համատեղ իրականացվող միջդպրոցական նախագծի վերջին փուլին մասնակցելու համար:

Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում «Այբ» դպրոցում գործող արվեստների խմբակների քրտնաջան աշխատանքի փայլուն արդյունքն էր Արվեստների շաբաթը, որի բացումը կայացավ նկարչական, գրաֆիկական դիզայնի խմբերի սաների աշխատանքների ցուցահանդեսով: Հաջորդիվ «Այբ»-ի **նվագախմբերի համերգն էր**: Կայացավ նաև «Այբ» դպրոցի ամենամյա հաշվետու համերգը, որի ժամանակ իրենց ելույթներով հիացրին ու զարմացրին պարախմբերն ու տղաների և աղջիկների երգչախմբերը:

«Այբ» դպրոցն ու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) Լոռու մարզում գտնվող **ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում** համատեղ անցկացրին բազմաբովանդակ նորարարական կրթական միջոցառում: Կողմերը փորձ և գիտելիք փոխանակեցին, ինչպես նաև հնարավորություն ունեցան նոր կապեր հաստատելու:
«Հայաստան» դահլիճում տեղի ունեցավ «Այբ» ավագ դպրոցի 7-րդ սերնդի շրջանավարտների **Վերջին զանգի** արարողությունը, որը բեմում ամփոփ ներկայացրեց այբական երեք տարին:

Internship 2019. աշխատանքի տոնավաճառին այս տարի մասնակցում էին 39 հայաստանյան և միջազգային կազմակերպություններ: Այս կազմակերպություններից 19-ին դիմորդները նախ ծանոթացան սեմինար-դասերի ընթացքում, ապա մեկնարկեց բուն տոնավաճառը: Դպրոցի շատ աշակերտներ ու շրջանավարտներ «Սովորում եմ աշխատելով» ծրագրի շրջանակում միշտ դիմել են բազմաթիվ կազմակերպությունների և հասել հաջողությունների. բացառություն չէր նաև այս տարին:

Ստոկհոլմում կայացած **«Վիքիմանիա 2019»** ամենամյա համաժողովում «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը Հայաստանի պատվիրակության կրթական ծրագրի հիմնական զեկուցողն էր: Արամ Փախչանյանը խոսել է հավասար կրթական հնարավորությունների, բաց կրթական աղբյուրների և այն մասին, թե ինչ հնարավորություններ կարող են ընձեռել «Վիքիմեդիա» հարթակները տարբերակված և ստեղծագործ կրթության համար: «Այբ»-ի տնօրենի ելույթը հետաքրքրել է Շվեդիայի կրթության մասնագետներին: Քննարկվել է հնարավոր համագործակցության հնարավորությունը:

«Այբ»-ի աշակերտները **Ստեփանակերտում** կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի «հրաշագործություններ» ցուցադրեցին իրենց հասակակիցների համար: **«Լույսի մոլորակ»** փառատոնին մասնակցում էին «Այբ» դպրոցի 6 սաներ երկու ուսուցչի ուղեկցությամբ:

Ուսումնական տարվա ընթացքում իրենց «Հաջողության բանաձևը» ներկայացրին Արևիկ Համբարձումյանը, Լիկա Թումանյանը, Էմմա Մարաշլյանը, Հայկ Սիմոնյանը, Հարի Բարդինը, Արմեն Մեդվեդևը և Տանյա Ռադոչայը:

Հյուրընկալեցինք

ՀՀ-ում **Արգենտինայի դեսպանության** առաքելության ղեկավարի տեղակալ Միգել Արթին-Չիլինգուրյանին, Արգենտինայից հրավիրված պարողներ Խորխե Մենդոսային և Սեսիլիա Մասսեին: «Այբ» դպրոցի աշակերտները հյուրերին ներկայացրին հայկական պարերը, հյուրերն էլ մեզ համար տանգոյի վարպետության դաս անցկացրին:

Կալիֆոռնիայի սենատի մի շարք պատգամավորների՝ Գլենդելի քաղաքապետ Զարեհ Սինանյանի գլխավորությամբ և «Այբ» համայնքի անդամ Ռուբեն Սիմոնյանի ուղեկցությամբ:

«Այբ»-ի «Անկեղծության պահեր» նախագծի շրջանակում Տ. Մեսրոպ քահանա Արամյանին: Հյուրն առավելագույնս անկեղծ պատասխանեց այն հարցերին, որոնք տալիս էին հանդիպման մասնակիցները:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր արտիստ Էդվարդ Թոփչյանին, որը հանդիպումից հետո «Այբ» դպրոցի աշակերտների համար կազմակերպեց երաժշտական սեմինար:

Եվրոպայի 40 երկրից մոտ 300 երիտասարդի: «Այբ» դպրոցը Եվրոպական երիտասարդական պառլամենտի՝ Երևանում անցկացվող 89-րդ միջազգային նստաշրջանի գլխավոր գործընկերն էր ու հիմնական հյուրընկալը:

Դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Լոնդոնի համալսարանական քոլեջի պրոֆեսոր Իեն Քրեյգին: Զրուցեցինք երկու երկրների կրթական առանձնահատկությունների մասին:

Ալեքսեյ Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցի լարային անսամբլին, փողային նվագախմբին, երգչախմբին, որոնք համերգային կատարումներով հանդես եկան «Այբ» դպրոցի «Հայաստան» դահլիճում:

«Քայլ դեպի տուն» ծրագրի ավելի քան 200 սփյուռքահայ երեխաների: Նրանց համար ճանաչողական շրջայց անցկացրին «Այբ»-ի աշակերտները: Ծանոթությունն ամփոփվեց այբական ուրախ շուրջպարով:

«Մելքոնյան համաշխարհային նախաձեռնության» համահիմնադիր Արսինե Շիրվանյանին: ԱՄՆ-ում գործող այս կառույցի նպատակն է Հայաստանում և սփյուռքում կրթական խնդիրներին լուծում գտնել:

Ernst&Young միջազգային աուդիտորական և խորհրդատվական ընկերության աշխատակիցներին: Հյուրերին հատկապես տպավորել էր «Այբ»-ի «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտների կենսապլաստիկների գյուտը՝ բնական միջավայրում քայքայվող տոպրակները:

Նուրսուլթանի SS համալսարանի ռեկտորին և պրոռեկտորին, Նուրսուլթան Նազարբաևի անվան կրթության զարգացման հիմնադրամի փոխտնօրենին, Ղազախստանի կրթության նախարարության փորձագետին: Հյուրերին հետաքրքրում էին Արարատյան բակալավրիատի ծրագիրը և շրջանավարտների ու հոգաբարձուների խորհրդի հետ աշխատանքի փորձը:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

«Այբ» ավագ դպրոցի աշակերտներ Նարեկ Օքրոյանն ու Սուրեն Արզումանյանն արժանացան SS ոլորտում ՀՀ վարչապետի մրցանակի:

«Այբ» դպրոցի «Կանաչ քիմիա» ակումբի «Այբպլաստ» նախագիծը հաղթեց Diamond Challenge Armenia մրցույթում: «Այբպլաստ» նախագծի շրջանակում մեր աշակերտները փորձել են ստանալ կենսապլաստիկներ՝ օգտագործելով բնական հումք: **Diamond Challenge** մրցույթի՝ ԱՄՆ-ում կայացած միջազգային եզրափակիչում մեր 4 աշակերտն ու 2 ուսուցիչը ներկայացրին իրենց բնապահպանական նախագիծն ու ամբողջ Հայաստանը և ստացան հատուկ մրցանակ՝ 1000 ԱՄՆ դոլարի տեսքով:

«Դպրոցը հանուն շրջակա միջավայրի» գերմանական միջազգային բնապահպանական նախագծի մրցույթում «Այբ» դպրոցը դարձավ հաղթող: «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտները, ներկայացնելով գերմաներեն և քիմիա առարկաների համատեղ բնապահպանական նախագիծ, մասնակցեցին Գյոթե-ինստիտուտի կողմից կազմակերպվող բնապահպանական ամենամյա **«Դպրոցը հանուն շրջակա միջավայրի» մրցույթին և հաղթեցին:**

«Այբ»-ի աշակերտները փայլուն արդյունքներով վերադարձան ՀՀ դպրոցների **առարկայական օլիմպիադաների** հանրապետական փուլից՝ նվաճելով առաջին կարգի 4 դիպլոմ, երկրորդ կարգի 6 դիպլոմ, երրորդ կարգի 2 դիպլոմ, 3 գովասանագիր: ԵՊՀ-ի օլիմպիադայում մեր աշակերտներն արժանացան 2-րդ կարգի 2 դիպլոմի և 2 գովասանագրի:

ԱՄՆ խաղաղության կորպուսի աջակցությամբ կազմակերպվող **Write On!** ստեղծագործական մրցույթի միջազգային փուլում «Այբ» դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Ալիսա Փախչանյանը զբաղեցրեց երկրորդ տեղը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ՝ Երվանդ Քոչարի թանգարանում բացվեց «Այբ»-ի 10-12-րդ դասարանների 26 սաների աշխատանքների ցուցահանդեսը: Աշակերտների ներկայացրած 28 աշխատանքները ոգեշնչված են Քոչարի և նրա ընկերների՝ 20-րդ դարի խոշորագույն վարպետներ Պիկասոյի, Բրակի, Լեժեի, Կիրիկոյի և այլոց ստեղծագործություններով:

«Այբ»-ի ռուսաց լեզվի ուսուցչուհի Կիմա Վանեսքեհյանը արժանացավ միջազգային հեղինակավոր մրցանակի: Ապրիլին նա մասնակցեց Ալեքսանդր Պուշկինի անվան ռուսաց լեզվի ուսուցիչների **միջազգային մրցույթին** և տեղ գրավեց դափնեկիրների և հաղթողների թվում:

«Այբ»-ի հինգ աշակերտների նկարչական աշխատանքները ներկայացվեցին 2019 թ. **ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Լույսի միջազգային օր»** (International Day of Light) նախաձեռնության շրջանակում անցկացված, ՔԵՆԴԼ ինստիտուտի կազմակերպած նկարչական մրցույթում: 8-րդ դասարանում սովորող Աննա Նարիմանյանը մրցույթի հաղթողներից է:

ԿԱՐԵՎՈՐ ԹՎԵՐ

«Այբ» դպրոցը 2018-2019 ուսումնական տարին մեկնարկեց 457 աշակերտով, որոնցից 192-ը սովորում է ավագ դպրոցում:
Այս ուսումնական տարում «Այբ» ավագ դպրոցի աշակերտների 75%-ը ստացավ կրթաթոշակ:
Աշակերտների 22%-ը (43 աշակերտ) ստացավ կրթաթոշակ ամբողջ ուսման վարձի չափով, 9,5%-ը (19 աշակերտ)՝ ուսման վարձի մինչև 97%-ի չափով, իսկ 25%-ը (50 աշակերտ)՝ ուսման վարձի մինչև 83%-ի չափով:

Ամանորի բարեգործական տոնավաճառի արդյունքում հանգանակվեց 1.486.760 ՀՀ դրամ: Գումարն ամբողջությամբ ուղղվեց «Այբ» դպրոցի Գ մասնաշենքի անհատական պահարանների ձեռքբերմանն ու տեղադրմանը:

2018-2019թթ. ակադեմիական տարվա համար հավաքագրված և Այբ» կրթական հիմնադրամից «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին փոխանցված կրթաթոշակային ֆոնդը կազմել է 93,119,431 ՀՀ դրամ:

«Այբ» դպրոցի աշակերտներն այս աշնանը կրկին միացան «Հայաստան ծառատունկ ծրագրի» (Armenia Tree Project) կազմակերպած ծառատունկին: Արագածոտնի մարզի Թալին քաղաքին կից մայրուղու հարակից տարածքում տնկվեց ավելի քան 500 ծառ:

«Այբ» դպրոցն ավարտեցին 41 շրջանավարտներ: Նրանք համալրեցին «Այբ»-ի շրջանավարտների մեծ համայնքն ու ընդգրկվեցին «Այբ»-ի մենտորության ծրագրում: «Այբ»-ի բոլոր տարիների շրջանավարտների թիվը հասավ 300-ի:

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ԱԲ ծրագիրը ճանաչող և ընդունող համալսարանների թիվն աճել է 38-ով: Այսպիսով համալսարանների ընդհանուր թիվը հասնում է 75-ի:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամի ներհոսք

Դրամ ՀՀ հազար

Ուսման վարձ	847,164
Նվիրաբերություն կրթաթոշակային ֆոնդի «Այբ» կրթական հիմնադրամի միջոցով*	92,213
Նպատակային նվիրաբերություններ	451
Աշակերտներին վերաբերող այլ մուտքեր	3,923
Այլ կրթական ծրագրերից մուտքեր	762
Նվիրատվություններ կանոնադրական նպատակների համար	4,000
Կարճաժամկետ փոխառությունների և օվերդրաֆտների ստացում	46,514
Այլ մուտքեր	23,170
Ընդամենը ներհոսք	1,018,197

Դրամի արտահոսք

Դրամ ՀՀ հազար

Հիմնական միջոցների ձեռքբերում	14,884
Կոմունալ ծառայություններ և կապ	41,222
Շենքերի և տարածքի սպասարկում, ընթացիկ վերանորոգում, վարձակալություն	33,825
Աշխատավարձային ֆոնդ և սոցիալական փաթեթ	749,835
Աշխատողների և ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և գործուղումներ	8,392
Աշակերտների ծախսեր (սնունդ, տրանսպորտային, ծրագրային ծախսեր, լող)	153,512
Ընդունելություն	1,561
Ավարտական միջոցառում	4,595
Տնտեսական, ադմինիստրատիվ և ներկայացուցչական ծախսեր	13,287
Մարքեթինգ, հաղորդակցություն և ֆոնդահայթայթում	4,613
ՏՀՏ սպասարկման ծառայություն	1,207
Անվտանգության ապահովում	23,328
Աուդիտորական, իրավաբանական, բանկային, արտաքին գնահատման ծառայություններ	15,504
Այլ կրթական միջոցառումների ծախսեր	2,369
Այլ ծախսեր	4,033
Կարճաժամկետ փոխառությունների և օվերդրաֆտների մարում	22,739
Ընդամենը արտահոսք	1,094,906

*«Այբ» կրթական հիմնադրամի միջոցով հավաքագրված և փոխանցված կրթաթոշակային ֆոնդի նվիրաբերությունների ընդհանուր չափը կազմում է 93.119 հազ. դրամ, որից 906 հազ. դրամը ստացվել է աշակերտների տրվող համակարգիչների տեսքով:

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: Մենք մեր դպրոց ընդունված բոլոր աշակերտներին տալիս ենք «Այբ»-ում սովորելու հավասար հնարավորություններ. «Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից ֆինանսական պատճառով: «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի «Այբ» հիմնադրամից ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի մասնակի կամ ամբողջական փոխհատուցում)՝ համաձայն ֆինանսական աջակցության տրամադրման սկզբունքների և նպատակների:

ԱՋԱԿՑԻ՛Ր «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻՆ

«Այբ» դպրոցը շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որ ստեղծվել է աշխարհի տարբեր անկյուններում ապրող ու աշխատող մարդկանց նվիրաբերությունների շնորհիվ: Ավելի քան 200 անհատ միավորել են իրենց ջանքերը, գիտելիքները, ֆինանսական և ժամանակային ռեսուրսները, պատասխանատվությունն ու սերը հանուն հայկական կրթության զարգացման, հանուն սերնդակերտման բարդ և շնորհակալ գործի: Մենք ունենք քո օգնության կարիքը «Այբ» դպրոցի հետագա զարգացման ու ընդլայնման համար: Մենք արդեն հավաքել ենք բավարար միջոցներ դպրոցի մասնաշենքերի շինարարության և համալրման, լաբորատորիաների ստեղծման և ամենաժամանակակից ուսումնական նյութերի մշակման համար: Այս ամենի շնորհիվ այսօր ավելի քան 450 աշակերտ ուսանում է «Այբ» դպրոցում, հաղթում ու պատվով ներկայացնում Հայաստանը միջազգային օլիմպիադաներում, ուսումը շարունակում աշխարհի լավագույն բուհերում, փոփոխություններ բերող ծրագրեր իրականացնում արդեն այսօր: Միացի՛ր «Այբ» դպրոցի ծրագրին, կատարի՛ր փոփոխություն հիմա, դարձրո՛ւ աշխարհն ավելի լավը:

Նվիրիր $150

և երեխաները կունենան նոր նյութեր ու սարքավորումներ գիտության իրենց դասերի համար:

Նվիրիր $600

և հովանավորիր 1 տաղանդավոր երեխայի 1 ամսվա ուսումը «Այբ» դպրոցում:

Նվիրիր $6000,

և մեկ աշակերտ ամբողջ տարի կսովորի «Այբ»-ում հենց քո շնորհիվ:

Նվիրիր $50.000

և քո անունով կոչիր մեկ լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում:

Նվիրիր $100.000

և դարձիր «Այբ» կրթական հանգույցի միջուկ-դրամագլխի բարերար:

Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով, և միասին կքննարկենք ամենահարմար տարբերակը:

Նվիրաբերի՛ր

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

Դժվար է գտնել երախտագիտության և հիացմունքի խոսքեր այն մարդկանց հանդեպ, որոնց շնորհիվ «Այբ» դպրոցն արդեն ութ տարի գոյություն ունի, զարգանում է և նոր ծրագրեր իրականացնում՝ մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելու առաքելությամբ: Մեր բարերարների ու աջակիցների թիվն անցել է երկու հարյուրի սահմանը՝ երկու հարյուր վառ անհատականություն աշխարհի տարբեր երկրներից, երկու հարյուր գաղափարակից, ովքեր իրենց ժամանակն ու ֆինանսական ռեսուրսները ներդրել են ի շահ հայկական կրթության մրցունակության բարձրացման, ի շահ ուսյալ ու առաքինի սերունդների կերտման: Երկու հարյուր մարդ հավատացել է «Այբ»-ի նպատակներին, երկու հարյուր մարդ կիսել է մեզ հետ մեր գործի հանդեպ նվիրումն ու սերը: Մեր ծրագրերի հաջողության հիմքը հենց այս անձանց արժեքների, փորձառության, հնարավորությունների, պատասխանատվության այն ընդհանուր հզոր ազդեցությունն է, որի շնորհիվ անգամ անիրատեսական թվացող նպատակները դառնում են շոշափելի:

2018-2019 ուսումնական տարվա կրթաթոշակային ֆոնդի բարերարներ

Արա Աբրահամյան
Գայանե Արամյան
Ռուբեն Սիմոնյան
Արթուր Ջանիբեկյան
Գրիգոր Մակիչյան
Շարմաղ Սաքունց
Meet for Charity
Հովնան Լալայան
Արաքսի Թումաջանյան
Անի Նազարյան
Էլեն Քարիմյան
Ալլա Ստեփանյան
Շաքե Աբրահամյան
Դավիթ Յան
Երվանդ Հովհաննիսյան
Վալենտինա Գևորգյան
Էդուարդ Միհրանյան
Սոնա Կոշեցյան
Արման Տիգրանյան
Մառտա Միսկարյան
Շուշանիկ Բասմաջյան
Թալին Սաղդասարյան
Ստեփան Բաբայան
Լևոն Ջանփոլադյան
Անահիտ Վարդանանց
Եվա Սողոյան
Արտակ Հովհաննիսյան
Անուշ Աբազյան
Նարեկ Խաչատրյան
Վիկտոր Ակուլյան
Գրիգոր Տեր-Ղազարյան
Արաքսյա Մարտիրոսյան
Ներսես Ավետիքի Ավդալյան
Արմեն Հարությունյան
Դավիթ Փախչանյան
Արամ Փախչանյան
Վահագն Հայրապետյան
Աշոտ Ասլանյան
Խաչատուր Դովլաթյան
Արման Վլադիկի Հարությունյան
Marian Valceanu
Յան Շի
Արմեն Սաֆարյան
Անի Ասատրյան
Արամ Մանուկյան
Լևոն Խաչատրյան
Աշոտ Պողոսյան
Արման Ջիլավյան
Հակոբ Մոմջյան
Ռուդոլֆ Սարգսյան
«Բարրի» ՍՊԸ
«Վեմ» կրթամշակութային հիմնադրամ
«Ձիգզագ» ՍՊԸ
«Արմ մարաթոն» մարզակրթական հիմնադրամ
«Դար» հիմնադրամ
«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
«Հայկս ընդ կո» ՍՊԸ
«Բողոսյան» հիմնադրամ

Այբ դպրոց

«Այբ» դպրոց
Թբիլիսյան խճ. 11/11
Երևան 0052, Հայաստանի
Հանրապետություն

094-54-64-98
096-500-456

www.**aybschool**.am

facebook.com/AybSchool

twitter.com/aybschool

instagram.com/aybschool

youtube.com/aybschool